

Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամ

Ծրագրի անվանումը

***Տրանսպորտային ուղիների շինարարություն և շահագործում
կրթական ծրագրի արդիականացումը՝ նորագույն
փորձասարքերով հագեցած լաբորատորիայի ներդրմամբ:***

Ծրագրի անվանման հապավումը

ՇԻՆԱԼԱԲ

Ծրագրի հիմնական նպատակները

Տրանսպորտային ուղիների շինարարության և շահագործման կրթական ծրագրի դասավանդման և ուսումնառության կատարելագործմանը, գիտահետազոտական գործունեության զարգացմանը և առևտրայնացմանը (կրթություն-գիտություն-բիզնես կապի ամրապնդում), կրթական գործընթացում գիտահետազոտական աշխատանքների ներգրավմանը և ԲՈՒՀ-ի ուսումնագիտական գործառնությունների ընդլայնմանն ու կարողությունների հզորացմանը միտված նորագույն փորձասարքերով հագեցած լաբորատորիայի հիմնում:

Ծրագրի հակիրճ նկարագրությունը

Ուսուցման որակը կրթական համաշխարհային արդիական բարձր չափանիշներին համապատասխանեցնելու և մրցունակ որակյալ կադրեր պատրաստելու գործընթացը, բացի տեսական նյութի մատուցման նորագույն տեխնոլոգիաների կիրառումից, պահանջում է նաև ուսանողների գործնական ու գիտահետազոտական հմտությունների զարգացման կարևորագույն ոլորտի սկզբունքային վերանայում ու այն ժամանակակից գիտատեխնիկական մակարդակի հասցնելու օրախնդիր անհրաժեշտություն: Սա, ինքնին, արդեն ենթադրում է ԲՈՒՀ-ի նյութատեխնիկական, և, հատկապես, լաբորատոր ուսումնագիտափորձարարական բազայի համալրում, նորացում, ընդլայնում, արդիականացում: Վերջին մի քանի տարում ՃՇՀԱՀ-ն ինտենսիվ կերպով ընդլայնում է շինարարական գրեթե բոլոր մասնագիտական ուղղություններով իր ուսումնագիտափորձարարական լաբորատոր բազան՝ համալրելով այն ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով: Այս գործընթացից անմասն է մնացել տրանսպորտային ուղիների շինարարության և շահագործման ոլորտը: Այդ նպատակով նախատեսվում է արդիականացնել ՃՇՀԱՀ-ի տրանսպորտային ուղիների շինարարություն և շահագործում մագիստրոսական կրթական ծրագիրը՝ համապատասխան նորագույն տեխնոլոգիական փորձասարքերով համալրման, դասավանդման նորագույն մեթոդների ներդրման, կրթություն-գիտություն-բիզնես կապի ամրապնդման միջոցով.

- համապատասխան լաբորատոր տարածքի առանձնացում և կահավորում,
- ներկայացված ոլորտին առնչվող առաջատար կազմակերպություններում օգտագործվող բազայի ուսումնասիրում,
- փորձարարական սարքերի, հարմարանքների ու գույքի ձեռքբերում և մոնտաժում,
- մագիստրոսական կրթական ծրագրի վերանայում և բարելավում, համապատասխան գրականության ձեռքբերում, ուսումնամեթոդական ձեռնարկների մշակում և տպագրում,
- մասնագիտական դասընթացների թվայնացում՝ Moodle էլեկտրոնային հարթակի կիրառմամբ,
- դասավանդողների, գիտաշխատողների և լաբորանտների վերապատրաստում,

- բուհ-աշխատաշուկա համագործակցության ընդլայնում՝ համապատասխան պայմանագրերի կնքման միջոցով:

ՃՇՀԱՀ-ի բարելավվող ուսումնագիտափորձարարական լաբորատոր բազան թույլ կտա.

- Ապահովել կրթական ծրագրերի դասավանդման և ուսումնառության առկա միջոցների կատարելագործում «Շինարարություն» մասնագիտության բոլոր կրթական ծրագրերի և առավելապես՝ «Տրանսպորտային ուղիների շինարարություն և շահագործում» կրթական ծրագրի գծով,
- Կրթություն-հետազոտություն կապի առավել ամրապնդում,
- Մասնակցել ճանապարհաշինարարական փորձաքննական աշխատանքներին և աուդիտորական ծառայություններ մատուցել՝ համապատասխան սերտիֆիկացում անցնելու դեպքում,
- «Հեռավար կրթության կազմակերպման նպատակով էլեկտրոնային ուսուցման մեթոդների զարգացում՝ Moodle էլեկտրոնային հարթակի կիրառմամբ,
- Ուսանողների, ասպիրանտների ու պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար ստեղծել արդիական պահանջներին համապատասխան բարձր մակարդակով գիտահետազոտական փորձարարական աշխատանքների կատարման տեխնիկական հնարավորություններ,
- Գիտակրթական կապերի ակտիվացում ինչպես ՀՀ, այնպես նրա սահմաններից դուրս տվյալ մասնագիտական ոլորտի ԲՈՒՀ-ական, գիտահետազոտական, գիտաարտադրական և այլ կազմակերպությունների հետ, նրանց հետ համատեղ գիտական աշխատանքների կատարման հնարավորությունների ստեղծում,
- Տեխնիկական համագործակցություն գործող շինարդյունաբերության, շինարարական և շինարարություններին վերահսկող կազմակերպությունների հետ՝ ինչպես նրանց անհրաժեշտ նոր մշակումների կատարման, այնպես էլ կիրառվող շինանյութերի, պատրաստվածքների, կոնստրուկցիաների ու կոնստրուկտիվ լուծումների փորձաքննությունների անցկացման ոլորտներում: Փոխհամագործակցությունների արդյունքների մշտական վերլուծություններ և ԲՈՒՀ-ի կրթական ծրագրերի համապատասխանեցում ոլորտի աշխատանքային շուկայի պահանջներին,
- Հանրապետության կարիքների համար նոր գիտահետազոտական մշակումների իրականացում: